

Բուժարանին կարող եք զանգահարել ամեն օր՝ ժամը 9.00-ից մինչև 16.30-ը: Սույն ժամերից դուրս, կարող եք հերթապահ բժիշկների կենտրոնի միջոցով կապվել մի բժշկի հետ:

Անանունություն

Ձեր ընտանեկան բժիշկն ու բուժօգնության ապահովագրողը տեղյակ չեն պահվում բուժարանում իրականացվող ձեր հղիության ընդհատման գործողության մասին:

Ձեզ տրվում է մի նամակ, որը պարունակում է տեղեկություններ ձեր հղիության ընդհատման գործողության մասին: Նշյալ գրությունը կարող եք ինքներդ հանձնել ձեր (ընտանեկան) բժշկին:

Հետստուգում

Հարկավոր է չորս շաբաթից անց ստուգվի, որ գործողությունը հաջող է անցել:

Սույն հետստուգումը հնարավոր է ձեր ընտանեկան բժշկի կամ մեր կլինիկայի բժիշկներից մեկի միջոցով: Միշտ անհրաժեշտ է, որ հղիության թեստ անցկացվի, որպեսզի պարզվի, որ այլևս առկա չեն հղիության հորմոններ:

Հղիության թեստ մինչև երեք շաբաթ գործողությունից հետո անարդյունք է, քանզի այդ ժամանակահատվածում դեռևս առկա են հղիություն հորմոնները:

Գործողությանը կապվող հնարավոր խնդիրներ առաջանալու դեպքում, խորհուրդ ենք տալիս կապվել մեր բուժարանի և կամ ձեր ընտանեկան բժշկի հետ: Հնարավոր է, որ այս խնդիրները երկար ժամանակ գործողությունից հետո էլ ի հայտ գան: Նման պարագայում, միշտ ցանկալի է դիմել օգնության:


Վերջապես, դուք կարող եք, ցանկացած բողոք/զանգատ ունենալու դեպքում դիմել մեզ: Կարող եք ուղղակիօրեն բողոքարկել բուժարանին կամ գրավոր բողոքների հանձնախմբին: Հասցեն կարող եք վերցնել սպասարանի ցուցատախտակից:

Ծախսերը

Եթե բնակվում եք Հոլանդիայում, հղիության ընդհատումը ձեր համար է: Ծախսերը հատուցվում են AWBZ¹-ի* միջոցով:

Եթե չեք բնակվում Հոլանդիայում, ծախսերի մասին կարող եք ինֆորմացիա ստանալ բուժարանից:

¹ Ծանոթ.՝ Օրենք՝ յուրահատուկ բուժօգնությունների ծախսերի մասին:



ՄԵՌԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ, ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀՈՒՆՆԻՒՄ,
STIMEZO/SGNN

Հասցե՝ Ռադեսինգել փող.,
p. Խրոնինգեն Radesingel
11, 9111 ED, Groningen
Հեռախ., (050)3132250
կայքէջ www.csgnn.nl

Հավելյալ տեղեկություններ կարող եք գտնել հոկյալ՝
[կայքէջում՝ www.csgnn.nl](http://www.csgnn.nl)

Եթե դուք հղի եք և չեք ցանկանում հղիությունը շարունակել, կա հնարավորություն դա ընդհատելու արհեստականորեն: Մեր կլինիկայում հնարավոր է գործողությունն իրականացնել վերջին դաշտանի առաջին օրից մինչև 13 շաբաթ ժամանակահատվածում:

Մինչև 16 օր չկայացած դաշտանից (ժամանակահատված, որ սպասվող դաշտանից անցել է) դուք կարող եք նկատի առնվել գործողության համար, որը նշանակում է վաղահաս վիժում = առանց օրենքով նշանակված խորհման/որոշման ժամկետի:

Սույն գործողությունը ընդհանուր առմամբ հնարավոր է չկայացած դաշտանից մինչև 12 օր ժամանակահատվածում:

Երբ ավելի քան 16 օր ձեր սպասված դաշտանից անցել է, «Հղիության ընդհատման օրենքը» պահանջում է 5 օր «խորհման/որոշման» ժամանակահատված՝ ձեր առաջին գրույցից հետո մասնագետի հետ ձեր հղիության ընդհատման մասին, մինչև գործողության օրը: Սույն գրուցատրաման, ինչպես նաև ընդունման ուղեգրի, համար կարող եք ձեր ընտանեկան բժշկի կամ մեր բուժարանի հետ պայմանավորվել:

Ընտանեկան բժշկի, կամ մեզ հետ, առաջին գրույցից հետո հնարավոր է պայմանավորվել գործողության թվականի մասին:

Երբ արդեն ունեք պայմանավորվածություն գործողության համար և սակայն նախքան այդ թվականը տեղի է ունենում արյունահոսություն, խորհուրդ ենք տալիս ձեզ մեզ զանգահարել խորհրդատվության համար:

Գործողությունը

Վակումային կյուրետաժի **պարագայում** արգանդը մաքրվում է վակումային ծծմամբ բարակ մի խողովակի միջոցով, որը տեղադրվում է արգանդի խոռոչում: Դուք չեք ստանում ընդհանուր նարկոզ, այլ տեղական անեստեզիա: Գործողությունը տևում է մոտավորապես 10 րոպե, որից վերջի 2 րոպեն ընթանում է ջրակծկումով: Ջրակծկումն ու ցավը ընդհանրապես անցնում է արագ գործողությունից հետո: Հանգստյան սենյակում, մոտավորապես կես ժամ մնում եք հսկողության տակ:

Գործողության մեթոդի մասին ձեզ տրվում է հավելյալ տեղեկություններ բուժարանում: Կարող եք նաև դիմել մեր կայքէջին հավելյալ տեղեկությունների համար:

Նախնական զրույց և հետազոտություն

Ընդունումից ու գրանցումից հետո, ունենում եք մի զրույց մի բժշկի կամ բուժքույրի հետ, որի ընթացքում խոսվում է ձեր հնարավոր որոշման մասին: Դուք ստանում եք ինֆորմացիա գործողության հնարավոր մեթոդների առթիվ: Ցանկացած հարց կարող եք տալ, որից հետո որոշում եք կայացնում գործողությունը (յ)անցկացնելու ու նաև գործողության մեթոդի մասին:

Նաև ուշադրություն է դարձվում ապագայում ձեր միջոցով օգտագործվելիք

հարմարավետ հակաբեղմնավորիչ միջոցների հարցին: (Մեծ մասամբ) հնարավոր է արգանդի մաքրումից հետո անմիջապես մի սպիրալ տեղադրել:

Հղիություն տևողությունը պարզելու համար, բժիշկը իրականացնում է վազինալ (հեշտոցի) ուլտրաձայնային ախտորոշում, ինչպես նաև ներարգանդային հետազոտություն:

Եթե հղիությունը (դեռևս) լավ նշմարելի չէ, գործողությունը 1-2 շաբաթ հետաձգվում է:

Եթե գործողությունը հնարավոր չէ մեր բուժարանում և կամ, եթե դուք որոշում եք հղիությունը շարունակել և կամ, տակավին տատանվում եք, մենք ձեզ օգնում ենք համապատասխան օգնությունը ստանալու հարցում:

Ի՞նչ բերել բուժարան

- Ուժի մեջ գտնվող բուժօգնության ապահովագրման քարտ և կամ փաստաթուղթ, որ դուք բնակվում եք Հոլանդիայում, օրինակ՝ տեղեկանք քաղաքապետարանի արձանագրային բաժնից;
- Հնարավոր դեպքում ընտանեկան բժշկից նամակ;
- Հնարավոր դեպքում տեղեկություններ ձեր արյան խմբի մասին;
- Եթե ցանկանում եք արգանդը մաքրել՝ զիջերային զեստ կամ (կարճաթև) երկար շապիկ, հողաթափ, կանացի տակդիր (ոչ թրջոց), երեսաբիչ, սրբիչ/քսակիկ, հավելյալ գուլպա ու հողաթափ: Հնարավոր է նաև ուտելիք, գործողությունից հետո օգտագործելու համար:

Եթե ցանկանում եք ձեզ աջակցող մեկի ձեզ հետ բուժարան բերել, դա միշտ հնարավոր է:

Հանգստի սենյակում գտնվող կանանց առանձնությունը պահպանելու կապակցությամբ սակայն, հնարավոր չէ այնտեղ տղամարդ ուղեկից ունենալ:

Գործողությունից

հետո դեպի տուն

Խորհուրդ չենք տալիս, որ դուք անձամբ մեքենա կամ հեծանիվ քշեք:

Խորհուրդ ենք տալիս գործողության օրը/օրերը, ինչպես նաև դրա հաջորդ օրը, ձեզ հանգիստ պահել և մինչև մեկ շաբաթ մարմնական ծանր գործունեություն չձեռնարկել:

Արյունահոսություն և փորացավ:

Հղիությունից հետո արյունահոսությունը շատ տարբեր չափեր կարող է ընդունել: Հնարավոր է դա առավել ծանր ու երկարատև լինի քան սովորական դաշտանը: Երբեմն էլ, ամենևին արյունահոսություն տեղի չի ունենում և կամ մի երկու շաբաթ միայն գորշ հեղուկ է արտազատվում: Գործողությունից հետո դաշտանին կապված փորացավը նորմալ է: Երբեմն, դա լինում է բավական ուժեղ: Այդ պահերին կարող եք օգտագործել ցավազրկիչներ՝ Պարացետամոլ կամ Իբոփրոֆեն: Գործողությունից հետո առաջին դաշտանը տեղի է ունենում 4-ից 6 շաբաթ անց:

Անտիբիոտիկներ

Գործողությունից հետո, ընդհանուր առմամբ ստանում եք անտիբիոտիկ, որպես զգուշամիջոց վարակի ռիսկը սահմանափակելու համար:

Չանել՝

Վակումային մաքրման գործողությունից մինչև մեկ շաբաթ չօգտագործել թրջոց, հեշտոցի տարածքում սեռական գործողություն չիրականացնել և լողավազանում չլողանալ (լոգանք կարող եք ընդունել):

Հակաբեղմնավորիչներ

Եթե որոշում եք հակաբեղմնավորիչ հատիկ ընդունել, վակումային մաքրման պարագայում, սկսեք ընդունել գործողության օրից:

Հղիության կապվող բողոքներ

Գլխապտույտն ու լարվածության զգացումը կրծքի տարածքում մի քանի օրվա ընթացքում անհետանում են: Հիշեցեք, որ հնարավոր է հանկարծակի հորմոնալ փոփոխությունների արդյունքում, ի հայտ գա անտարբերության զգացումներ, տրամադրության անկայունություն ու հոգնածություն:

Այլ իրավիճակներ

Հետևյալ պարագաներում, խորհուրդ ենք տալիս կապվել մեր բուժարանի և կամ ձեր ընտանեկան բժշկի հետ՝

- Երբ տեղի է ունենում չափից դուրս հեղուկահոսում և կամ առավել ուժեղ փորացավ քան դաշտանի ժամանակ;
- Երբ 38.5 աստիճանից բարձր ջերմություն է առաջանում: